

Հարց

Կազմակերպությունը ԱՀ տարածք է ներմուծել ԱՏԳ ԱԱ 3808 94 ծածկագրին դասվող մաքրող և ախտահանող միջոցներ: Տվյալ ապրանքների օտարումը ազատվում է արդյոք ԱԱՀ-ից:

Պատասխան

«Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ ԱԱՀ-ից ազատվում են ԱՏԳ ԱԱ 3808 91, 3808 92, 3808 93, 3808 94, 3808 99 ապրանքախմբի ծածկագրերին դասվող թունաքիմիկատների օտարումը: Նշյալ ծածկագրերին դասվող թունաքիմիկատներ չհամարվող այլ ապրանքատեսակների օտարման մասով ԱԱՀ-ից ազատման արտոնությունը կիրառելի չէ: Հաշվի առնելով, որ մաքրող և ախտահանող միջոցները չեն հանդիսանում թունաքիմիկատներ, ուստի տվյալ գործարքի մասով ԱԱՀ-ն հաշվարկվում և վճարվում է օրենքով սահմանված ընդհանուր կարգով:

Հարց

Ֆիզիկական անձի կողմից 2021 թվականի փետրվարին ձեռք է բերվել բնակարան և առանձնատուն, որոնք նրա կողմից օգտարվել են 2021 թվականի դեկտեմբերին: Օգտարված գույքերի մասով ֆիզիկական անձը կրում է արդյոք ավելացված արժեքի հարկի վճարման պարտավորություն:

Պատասխան

«Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն՝ մեկ օրացուցային տարվա ընթացքում երկու և ավելի թվով անգամ անձի սեփականությունը կամ ընդհանուր սեփականությունը հանդիսացող նույն տեսակի հետևյալ գույքի՝ բնակարանի, առանձնատան (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), անձնական օգտագործման ավտոմեքենայի, գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի հողերի, ավտոտնակի, որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց օտարման դեպքերում ապրանքի մատակարարում է համարվում այդ ժամանակահատվածում երկրորդ և ավելի թվով նույն տեսակի գույքի օտարումը, եթե օտարումը կատարվում է տվյալ գույքի ձեռքբերմանը հաջորդող մեկ տարին չգերազանցող ժամանակահատվածում:

Օրենքում կիրառված «նույն տեսակի գույք» հասկացությունը նշանակում է միանման հատկանիշներով օժտված, միևնույն նպատակային նշանակություն ունեցող գույք: Մասնավորապես, բնակարանը և առանձնատունը չեն կարող օրենքի իմաստով համարվել նույն տեսակի գույք, քանի որ, թեև դրանք երկուսն էլ ունեն միևնույն նպատակային նշանակությունը, այն է՝ նախատեսված են մարդկանց բնակվելու համար, այնուամենայնիվ, դրանք չունեն միանման հատկանիշներ, քանի որ բնակարանը շենքում գտնվող առանձին տարածք է՝ բաղկացած բնակելի և օժանդակ մասերից, օժտված կոմունալ հարմարություններով, իսկ առանձնատունը առանձին հողամասի վրա կառուցված, բնակելի, օժանդակ և կոմունալ հարմարություններով օժտված շինություն է:

Ելնելով վերոգրյալից՝ 2021 թվականի դեկտեմբեր ամսում ֆիզիկական անձի կողմից բնակարանի և առանձնատան օտարման գործարքները «Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքի իմաստով ապրանքի մատակարարում չեն համարվում, և հետևաբար ֆիզիկական անձի համար ավելացված արժեքի հարկի վճարման պարտավորություն չի առաջանում, քանի որ առկա չէ նույն տեսակի գույքի երկրորդ և հաջորդող օտարում:

Հարց

Ա կազմակերպությունը 30.08.2021 թ. Բ կազմակերպությանը դուրս է գրել

հարկային հաշիվ, որում սխալ է լրացրել մատակարարված ապրանքի միավորի գինը, սակայն Բ կազմակերպությունը այն սխալմամբ էլեկտրոնային ստորագրությամբ վավերացրել է: Ինչպե՞ս պետք է հաշվում պարունակող տվյալները ճշտվեն:

Պատասխան

«Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքի 18-րդ հոդվածով սահմանված են դեպքերը, երբ ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման և (կամ) ծառայության մատուցման գործարքին վերաբերող հարկային հաշիվը ապրանք մատակարարող, աշխատանք կատարող և (կամ) ծառայություն մատուցող կազմակերպության և անհատ ձեռնարկատիրոջ նախաձեռնությամբ կարող է չեղարկվել:

Հաշվի առնելով վերոնշյալ իրավակարգավորումը՝ Ա կազմակերպությունը պետք է չեղարկի դուրս գրված հարկային հաշիվը և տվյալ գործարքի մասով ճիշտ տվյալներին համապատասխան դուրս գրի նոր հարկային հաշիվ՝ ապրանքի մատակարարման ամսաթիվ նշելով սկզբնական հաշվում նշված ամսաթիվը:

Հարց

Ա կազմակերպությունը 2021 թվականի մարտ ամսում Բ կազմակերպությանը դուրս է գրել հարկային հաշիվ, որը Բ կազմակերպության կողմից ստորագրվել է 2021

թվականի մայիսի 5-ին:

Բ կազմակերպությունը ո՞ր հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացվող ԱԱՀ-ի հաշվարկով կարող է կատարել ԱԱՀ-ի հաշվանցում:

Պատասխան

«Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքի 431-ին հոդվածի համաձայն՝ մատակարարների կողմից դուրս գրված այն հարկային հաշիվներում (այդ թվում՝ հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո դուրս գրված, սակայն այդ հաշվետու ժամանակաշրջանին վերաբերող) առանձնացված ԱԱՀ-ի գումարները, որոնք մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ էլեկտրոնային ստորագրությամբ չեն վավերացվել, տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացվող ԱԱՀ-ի հաշվարկով հաշվանցման ենթակա չեն և կարող են հաշվանցվել այդ հարկային հաշիվներն էլեկտրոնային ստորագրությամբ վավերացնելու օրն ընդգրկող հետագա հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացվող ԱԱՀ-ի հաշվարկով:

Նշված օրինակում, եթե Բ կազմակերպությունը համարվում է եռամսյակային ԱԱՀ վճարող, ապա ԱԱՀ-ի հաշվանցումը կատարելու է 2021 թվականի 2-րդ եռամսյակի համար ներկայացվող ԱԱՀ-ի հաշվարկով, իսկ ամսական ԱԱՀ վճարող համարվելու դեպքում՝ 2021 թվականի մայիս ամսվա համար ներկայացվող ԱԱՀ-ի հաշվարկով:

Հարց

Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձը 2010 թվականին ձեռք է բերել բնակարան, որը 2021թ. հունվարին առանձնացրել է երկու առանձին բնակարանների և վաճառել փեյրովար ամսին: Արդյո՞ք նշված գործարքի մասով ֆիզիկական անձը կրում է ավելացված արժեքի հարկի վճարման պարտավորություն:

Պատասխան

«Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետի համաձայն՝ մեկ օրացուցային տարվա ընթացքում երկու և ավելի թվով

անգամ անձի սեփականությունը կամ ընդհանուր սեփականությունը հանդիսացող նույն տեսակի հետևյալ գույքի՝ բնակարանի, առանձնատան (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), անձնական օգտագործման ավտոմեքենայի, գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի հողերի, ավտոտնակի՝ որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց օտարման դեպքերում ապրանքի մատակարարում է համարվում այդ ժամանակահատվածում երկրորդ և ավելի թվով նույն տեսակի գույքի օտարումը, եթե օտարումը կատարվում է տվյալ գույքի ձեռքբերմանը հաջորդող մեկ տարին չգերազանցող ժամանակահատվածում:

«Գույքի նկատմամբ իրավունքների գրանցման մասին» օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքով սահմանված կարգով գրանցված սեփականության իրավունք ունեցող սուբյեկտները կարող են բաժանել սեփականության իրավունքով իրենց պատկանող անշարժ գույքի միավորներն առանձին միավորների կամ միավորել դրանք անշարժ գույքի այլ միավորների հետ: Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը (կոնկրետ դեպքում բնակարանը) բաժանելու և առանձին գույքային միավորների նկատմամբ տվյալ ֆիզիկական անձի սեփականության իրավունքը գրանցելն անշարժ գույքի օտարում կամ անշարժ գույքի ձեռքբերում չի համարվում:

Հաշվի առնելով վերոնշյալ կարգավորումները՝ տվյալ պարագայում անհատ ձեռնարկատեր չհամարվող ֆիզիկական անձի կողմից օրացույցային տարվա ընթացքում նույն տեսակի երկրորդ գույքի՝ բնակարանի օտարման գործարքը ապրանքի մատակարարման գործարք չի համարվում, քանի որ օտարված նույն տեսակի երկրորդ գույքը ձեռք չի բերվել այդ գույքի օտարման օրվան նախորդող մեկ տարվա ընթացքում:

Հարց

Կազմակերպությունը հյուրանոցային ծառայություններ է մատուցում ԱՀ տարածքում ֆիզիկական կամ իրավաբանական անձանց իրենց կողմից ամրագրված ժամանակահատվածի համար, օրինակ՝ 27.09.2021 - 07.10.2021թթ. ժամանակահատվածի համար: Նշված դեպքում ե՞րբ պետք է դուրս գրվի հարկային հաշիվը, և ե՞րբ պետք է ճանաչվի մատուցված ծառայությունների գծով եկամտի ստացման իրավունքը:

Պատասխան

«Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքի 18-րդ հոդվածի համաձայն՝ հարկային հաշիվները դուրս են գրվում ապրանքը մատակարարելու, աշխատանքի կատարումն ավարտելու (այդ թվում՝ ըստ պայմանագրով նախատեսված փուլերի) և (կամ) ծառայության մատուցումն ավարտելու (այդ թվում՝ ըստ պայմանագրով նախատեսված փուլերի) պահին, բացառությամբ նույն հոդվածի յոթերորդ պարբերությամբ սահմանված դեպքերի:

Օրենքի 31-րդ հոդվածի համաձայն՝ ԱԱՀ վճարողների կողմից հարկվող գործարքների (գործառնությունների) իրականացման դեպքում ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման, անհատույց (մասնակի հատուցմամբ) սպառման, ինչպես նաև դրա հետ կապված հարկային պարտավորության (ԱԱՀ-ի հաշվարկման) ծագման պահ է համարվում այն պահը, երբ տեղի է ունեցել ներքոհիշյալ դեպքերից որևէ մեկը՝

1) ապրանքները առաքվել կամ հանձնվել են գնորդներին կամ ծառայությունները մատուցվել են պատվիրատուներին:

2) անհատույց (մասնակի հատուցմամբ) սպառման հարկվող գործարքների (գործառնությունների) իրականացման օրը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ կազմակերպության կողմից որևէ հաշվետու ժամանակաշրջանում մատուցվող հյուրանոցային ծառայությունների մասով ԱԱՀ-ի պարտավորությունները (ըստ համապատասխան օրերի) հաշվարկվում և արտացոլվում են համապատասխան հաշվետու ժամանակաշրջանի ԱԱՀ-ի հաշվարկում, իսկ հարկային հաշիվը դուրս է գրվում յուրաքանչյուր օրվա համար, եթե ծառայություն մատուցողն ավարտում է ծառայություն ստացողի օգտին գործողության իրականացումն ըստ օրերի: Իսկ երբ պայմանագրով սահմանված է, որ տվյալ դեպքում ծառայություն մատուցողն ավարտում է ծառայություն ստացողի օգտին գործողության իրականացումը 07.10.2021թ.-ին, ապա ծառայության մատուցման պահ է համարվում 07.10.2021թ.-ը, և տվյալ գործարքի մասով հարկային հաշվում որպես ծառայության մատուցման ամսաթիվ նշվում է 07.10.2021թ.-ը:

Հարց

Ապրանքները գնորդներին մատակարարելուց հետո՝ գործարքից մի քանի ամիս անց, գնորդը մատակարարված ապրանքների մի մասը վերադարձրել է: Ճշգրտող հարկային հաշիվ դուրս գրելիս՝

- մատակարարման ամսաթիվը պետք է գրել հետ վերադարձի օրը, թե՞ գնորդին ապրանքի մատակարարման օրը,

- ապրանքների առաքման և նշանակման վայրերը լրացնելիս արդյո՞ք պետք է զուգահեռ տեղափոխվեն:

Պատասխան

«Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքի 18-րդ հոդվածով սահմանված են այն դեպքերը, երբ օրենքի կիրառության նպատակով ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման և (կամ) ծառայության մատուցման գործարքը կարող է ճշգրտվել: Ուստի, եթե առկա են գործարքի ճշգրտման հիմքերը, ապա ճշգրտող հարկային հաշիվը դուրս է գրվում ճշգրտման համապատասխան հիմքի առաջացման օրը, որում որպես ապրանքների մատակարարման ամսաթիվ նշվում է գնորդ կազմակերպության կողմից ապրանքների հետ վերադարձման օրը, իսկ ապրանքների առաքման և նշանակման վայրերը նշվում են համապատասխանաբար գնորդ կազմակերպության հասցեն, որտեղից ապրանքները մատակարարվում են, և մատակարար կազմակերպության հասցեն, որտեղ ապրանքները հանձնվում են:

Հարց

Ապրանքի մատակարարման գործարքի ճշգրտման դեպքում գործարքի կողմեր համարվող հարկ վճարողները ո՞ր ժամանակաշրջանի ԱԱՀ-ի հաշվարկում են պարտավոր արտացոլել գործարքի ճշգրտման արդյունքները ԱԱՀ-ի մասով:

Պատասխան

«Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքի 33-րդ հոդվածի համաձայն՝ ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման և (կամ) ծառայության մատուցման գործարքի ճշգրտման դեպքում գործարքի կողմեր համարվող հարկ վճարողները (բացառությամբ հանրային ծառայություններ մատուցող հարկ վճարողների) պարտավոր են գործարքի ճշգրտման արդյունքները ԱԱՀ-ի մասով արտացոլել՝

1) ճշգրտող հարկային հաշվի դուրսգրման օրը ներառող հաշվետու ժամանակաշրջանի հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ-ի հաշվարկում, եթե գործարքի ճշգրտման արդյունքում նվազում է գործարքից առաջացած հարկային

պարտավորության գումարը, իսկ գործարքի մյուս կողմի մոտ՝ հաշվանցման (պակասեցման) ենթակա հարկի գումարը:

2) հիմնական գործարքի կատարման օրը ներառող հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ-ի հաշվարկում, եթե գործարքի ճշգրտման արդյունքում ավելանում են գործարքից առաջացած հարկային պարտավորության գումարը, իսկ գործարքի մյուս կողմի մոտ՝ հաշվանցման (պակասեցման) ենթակա հարկի գումարը:

Հանրային ծառայություններ մատուցող հարկ վճարողները պարտավոր են գործարքի ճշգրտման արդյունքներն արտացոլել ճշգրտման կատարման օրը ներառող հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ-ի հաշվարկում:

Հարց

Իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից անշարժ գույքի տեսքով կատարված ներդրումը հարկվում է, արդյոք, ԱԱՀ-ով:

Պատասխան

«Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 38-րդ կետի համաձայն՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից իրավաբանական անձանց կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում շենքի, բնակարանի, առանձնատան կամ այլ շինության (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց) ներդրումն ազատվում է ԱԱՀ-ից, եթե այդ ներդրմանը համապատասխանող՝ ֆիզիկական անձին պատկանող բաժնեմասը մինչև ներդրումը կատարելու պահին հաջորդող երեք տարին լրանալը չի օտարվել այլ անձի: Մինչև ներդրումը կատարելու պահին հաջորդող երեք տարին լրանալը բաժնեմասը օտարվելու դեպքում նշված գործարքը հարկվում է ԱԱՀ-ով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքով սահմանված ընդհանուր կարգով: Ընդ որում, նույն օրենքի 31-րդ հոդվածի համաձայն՝ ԱԱՀ-ի ծագման պահ է համարվում բաժնեմասի օտարման պահը:

Հարց

Ո՞ր դեպքում արտադրական նպատակներով կատարված ձեռքբերումների կորուստներին վերաբերող ԱԱՀ-ի գումարներն ենթակա չեն հաշվանցման:

Պատասխան

«Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքի 23-րդ հոդվածի համաձայն՝ ԱԱՀ վճարող անձանց կողմից արտադրական և այլ առևտրային նպատակներով ձեռք բերված ապրանքների կորստի դեպքում մատակարարներին (օրենքով սահմանված դեպքում՝ մաքսային սահմանին) վճարված (հարկային հաշիվներում կամ մաքսային փաստաթղթերում առանձնացված) ԱԱՀ-ի գումարները ենթակա չեն հաշվանցման կամ վերադարձման, եթե այդ կորուստները շահութահարկով հարկման նպատակով չեն դիտվում որպես համախառն եկամտից նվազեցում:

Հարց

Տարայավորված ապրանքի մատակարարման դեպքում տարայի արժեքը ներառվում է արդյոք ԱԱՀ-ով հարկվող շրջանառության մեջ:

Պատասխան

«Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ տարայավորված ապրանքի մատակարարման դեպքում տարայի արժեքը ներառվում է ԱԱՀ-ով հարկվող շրջանառության մեջ՝ անկախ ապրանքի մատակարարման պայմանագրով տարայի վերադարձ նախատեսված լինելու հանգամանքից:

Հարց

Հատիկահավաք կոմբայնի վաճառքն ազատվո՞ւմ է արդյոք ավելացված արժեքի հարկից:

Պատասխան

«Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ ԱՏԳ ԱԱ դասակարգչի 8432, 8433, 8434, 8436, 8701 ծածկագրերին դասվող տեխնիկայի և մասերի իրացումն ազատվում է ավելացված արժեքի հարկից: Մասնավորապես, հատիկահավաք կոմբայնները դասվում են ԱՏԳ ԱԱ 8433 51 000 ծածկագրին, հետևաբար դրանց իրացումն ազատվում է ավելացված արժեքի հարկից:

Հարց

Գերեզմանաքարերի իրացումն ազատվո՞ւմ է արդյոք ավելացված արժեքի հարկից:

Պատասխան

«Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 11-րդ կետի համաձայն՝ թաղման բյուրոների, գերեզմանատների, ինչպես նաև մահվան և հուղարկավորության հետ կապված ծիսական բնույթի այլ ծառայությունների մատուցումը և համապատասխան պարագաների իրացումն ազատվում է ավելացված արժեքի հարկից:

Հարց

Հասարակական նշանակության գույքը ընդհանուր սեփականության իրավունքով պարկանում է մի քանի անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց: Այդ գույքի օգտարման դեպքում ԱԱՀ-ի շեմը կիրառելի՞ է արդյոք բոլոր համասեփականատերերի նկատմամբ:

Պատասխան

«Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքի 35-րդ հոդվածի համաձայն՝ մեկից ավելի անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց ընդհանուր սեփականությունը հանդիսացող հասարակական նշանակության գույքի օտարման դեպքում ԱԱՀ-ի շեմը կիրառվում է մեկ անգամ՝ անկախ պայմանագրով գույք օտարող կողմում հանդես եկող անձանց թվաքանակից և այդ գույքի նկատմամբ սեփականություն ունեցողների թվաքանակից:

Հարց

Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից անձնական օգտագործման ավտոմեքենայի օգտարումը ենթակա է արդյոք ԱԱՀ-ով հարկման:

Պատասխան

Համաձայն «Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքի 3-րդ և 6-րդ հոդվածների՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից անձնական օգտագործման ավտոմեքենայի՝ որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց օտարման գործարքը ենթակա է հարկման ԱԱՀ-ով, եթե երկրորդ և ավելի թվով

անգամ օտարվող ավտոմեքենան ձեռք է բերվել օտարման պահին նախորդող մեկ տարին չգերազանցող ժամանակահատվածում: Ընդ որում՝ տվյալ դեպքում ԱԱՀ-ի շեմ չի կիրառվում:

Հարց

Գույքի հավատարմագրային կառավարման արդյունքում հավատարմագրային կառավարչի կողմից իրականացված՝ ԱԱՀ-ով հարկվող գործարքների մասով ինչպե՞ս է որոշվում ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը:

Պատասխան

«Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքի 40¹-ին հոդվածի համաձայն՝ գույքի հավատարմագրային կառավարման արդյունքում հավատարմագրային կառավարչի կողմից իրականացված՝ ԱԱՀ-ով հարկվող գործարքների մասով ԱԱՀ-ով հարկվող շրջանառություն է համարվում այդ գործարքների համար «Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքին համապատասխան որոշվող ընդհանուր շրջանառությունը: Այդ գործարքների գծով ԱԱՀ-ի հաշվարկման և վճարման պարտավորությունը, իր և կառավարման հիմնադրի փոխարեն, կրում է գույքի հավատարմագրային կառավարիչը: Հավատարմագրային կառավարման արդյունքում իրականացված գործարքների մասով բյուջե վճարման ենթակա է այդ գործարքների հարկվող շրջանառության նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարի և հավատարմագրային կառավարման հանձնված գույքի կազմում ներառվող՝ այդ գործարքների իրականացման նպատակով ձեռքբերված (ներմուծված) ապրանքների և ստացված ծառայությունների գծով մատակարարների կողմից դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված՝ սույն օրենքին համապատասխան հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարների տարբերությունը:

Հարց

Ավելացված արժեքի հարկով հարկման առումով փոխադրամիջոցների վարձակալության դեպքում ո՞րն է ծառայության մատուցման վայրը:

Պատասխան

«Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝ փոխադրամիջոցների վարձակալության դեպքում ծառայության մատուցման վայր է համարվում այն վայրը, որտեղ վարձատուն իրականացնում է ձեռնարկատիրական գործունեություն, կամ դրա բացակայության դեպքում՝ նրա իրավաբանական հասցեն կամ բնակության վայրը:

Հարց

Ինչպե՞ս են արտացոլվում անվավեր ճանաչված գործարքները ԱԱՀ-ի հաշվարկում:

Պատասխան

Գործարքի կողմերն օրենքով սահմանված կարգով ներկայացնում են ԱԱՀ-ի ճշտված հաշվարկներ:

Հարց

Ձեռք բերված ապրանքների դիմաց մատակարարին վճարման ենթակա գումարի մի մասը բանկի միջոցով փոխանցելու, իսկ մյուս մասը կանխիկ դրամով

վճարելու դեպքում հարկային հաշվում առանձնացված ԱԱՀ-ի գումարը, արդյո՞ք, լրիվությամբ ենթակա է հաշվանցման:

Պատասխան օրենքի 23-րդ հոդվածի համաձայն՝ ձեռք բերված ապրանքների և ստացված ծառայությունների դիմաց մատակարարին վճարման ենթակա գումարի մի մասը բանկի կամ փոստի միջոցով փոխանցելու, իսկ մյուս մասը կանխիկ դրամով վճարելու կամ այլ կերպ հատուցելու դեպքերում ԱԱՀ-ի հաշվանցումը սահմանված կարգով կատարվում է միայն բանկի կամ փոստի միջոցով մատակարարի բանկային հաշվին փոխանցումներով վճարումներին վերաբերող մասով:

Հարց

Կազմակերպություն (անհատ ձեռնարկատեր) գրավատուից գրավադրված և ի սեփականություն անցած գույքի՝ բանկի կողմից հետագա իրացման գործարքները հարկվո՞ւմ են, արդյոք, ԱԱՀ-ով:

Պատասխան

Կազմակերպություն (անհատ ձեռնարկատեր) գրավատուից գրավադրված և ի սեփականություն անցած գույքի՝ բանկի կողմից հետագա իրացման գործարքները ենթակա են հարկման ԱԱՀ-ով: Բացառություն է կազմում միայն բանկի սեփականություն դարձած՝ անհատ ձեռնարկատեր չհամարվող ֆիզիկական անձանց մինչ այդ պատկանող գրավի առարկայի իրացման գործարքը, որը, համաձայն «Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 17-րդ կետի, ազատվում է ԱԱՀ-ից:

Հարց

Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձը ո՞ր դեպքերում է կարող դուրս գրել հարկային հաշիվ:

Պատասխան

«Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքի 6-րդ հոդվածի և ԼՂՀ կառավարության 2009թ. հունիսի 23-ի թիվ 403-Ն որոշման համաձայն՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձը կարող է հարկային հաշիվ դուրս գրել ապրանքի մատակարարում համարվող և ԱԱՀ-ով հարկման ենթակա գործարքների մասով՝ միայն գնորդի (կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ) պահանջով (գրավոր կամ բանավոր), և եթե այդ ֆիզիկական անձն ունի ՀՎՀՀ:

Հարց

Պարտադի՞ր է, արդյոք, հարկային հաշվի դուրս գրումը մանրածախ առևտրի և բնակչությանը ծառայությունների մատուցման ոլորտներում:

Պատասխան

Ոչ: «Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքի 20-րդ հոդվածի համաձայն՝ մանրածախ առևտրի և բնակչությանը ծառայությունների մատուցման ոլորտներում հարկային հաշիվ դուրս է գրվում միայն գնորդի պահանջով (գրավոր կամ բանավոր):

Հարց

Ընկերության վերակազմակերպման գործարքը ենթակա՞ է, արդյոք, ավելացված արժեքի հարկով հարկման:

Պատասխան

«Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ իրավաբանական անձի՝ օրենքով սահմանված կարգով վերակազմակերպման գործարքները (միացում, միաձուլում, բաժանում, առանձնացում, վերակազմավորում) ավելացված արժեքի հարկով չեն հարկվում (հարկման օբյեկտ չեն համարվում):

Հարց

ԱԱՀ վճարող կազմակերպությունը ոչ արտադրական նպատակով ձեռք բերված գույքի մասով մատակարարից ստացված հարկային հաշվում ԱԱՀ-ի գումարը կարո՞ղ է, արդյոք, հաշվանցել, եթե գույքը բարեգործական նպատակներով տրամադրվում է ոչ առևտրային կազմակերպությանը:

Պատասխան

ԱԱՀ վճարող համարվող կազմակերպությունը ոչ արտադրական (ոչ առևտրային) նպատակներով ձեռք բերված ապրանքները՝ այլ կազմակերպության անհատույց (մասնակի հատուցմամբ) հատկացման դեպքում կարող է հաշվանցել մատակարարների հարկային հաշիվներում (ներմուծման դեպքում՝ մաքսային հայտարարագրերում) առանձնացված ԱԱՀ-ի գումարները՝ պահպանելով «Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքի 20-րդ և 23-րդ հոդվածների պահանջները: Միաժամանակ, կազմակերպությունը, «Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, կկրի ավելացված արժեքի հարկի հաշվարկման պարտավորություն:

Հարց

ԱՀ-ում գրանցված ԱԱՀ վճարող կազմակերպությունը բարեգործական ծրագրի շրջանակում ապրանքների մատակարարման գործարքի մասով ազատվո՞ւմ է, արդյոք, ԱԱՀ-ից:

Պատասխան

«Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 29-րդ կետի համաձայն՝ ԱՀ-ում ԱԱՀ վճարողների կողմից մարդասիրական օգնության և բարեգործական ծրագրերի իրականացման հետ անմիջականորեն կապված և դրանց համար զգալի նշանակություն ունեցող ապրանքների մատակարարումը և ծառայությունների մատուցումը ազատվում է ԱԱՀ-ից: Ընդ որում, ծրագրի (գործունեության) տարբերակումն ըստ մարդասիրական օգնության և բարեգործական բնույթի, ինչպես նաև ԱԱՀ-ից ազատվող ապրանքների և ծառայությունների շրջանակները որոշում է ԱՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը:

Հարց

Փոխանակման գործարքների մասով դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները ենթակա՞ են, արդյոք, հաշվանցման:

Պատասխան

«Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքի 23-րդ հոդվածի համաձայն՝ փոխանակման գործարքների մասով դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները գործարքի կողմ հանդիսացող սուբյեկտների կողմից հաշվանցման ենթակա չեն:

Հարց

Գրավ դրված գույքը սեփականության իրավունքով գրավառու բանկին (վարկային կազմակերպությանը) անցնելու դեպքում ո՞րն է համարվում ավելացված արժեքի հարկով հարկվող շրջանառություն:

Պատասխան

Համաձայն «Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ պարբերության՝ գրավ դրված գույքը սեփականության իրավունքով գրավառու բանկին (վարկային կազմակերպությանը) անցնելու դեպքում ավելացված արժեքի հարկով հարկվող շրջանառություն է համարվում գրավ դրված գույքի՝ օրենքի 8-րդ հոդվածով սահմանված կարգով որոշվող իրացման գնի և վարկային պարտավորության դրական տարբերությունը:

Հարց

Փոխադրամիջոցների վարձակալության դեպքում որ՞ն է համարվում ծառայության մատուցման վայրը:

Պատասխան

Համաձայն «Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 14-րդ հոդվածի՝ փոխադրամիջոցների վարձակալության դեպքում ծառայության մատուցման վայր է համարվում այն վայրը, որտեղ վարձատուին իրականացնում է ձեռնարկատիրական գործունեություն, կամ դրա բացակայության դեպքում՝ նրա իրավաբանական հասցեն կամ բնակության վայրը:

Հարց

Ո՞րն է համարվում ապրանքների մատակարարման վայր և որ դեպքում են ապրանքները համարվում մատակարարված ԱՀ-ում:

Պատասխան

Համաձայն «Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքի 12-րդ հոդվածի՝ ապրանքների մատակարարման վայր է համարվում ապրանքների գտնվելու տեղը, որտեղից դրանք փաստացի մատակարարվում են: Ապրանքները համարվում են մատակարարված ԱՀ-ում, եթե դրանք՝

ա/ առաքվել կամ հանձնվել են գնորդին (պատվիրատուին) ԱՀ տարածքում.

բ/ արտահանվել են ԱՀ-ից (ՀՀ-ից):

Ներմուծված ապրանքները համարվում են մատակարարված ԱՀ տարածքում դրանց ներմուծման պահից:

Հարց

Ծառայությունների մատուցմանը վերաբերվող հարկային հաշիվը ե՞րբ չի կարող անվավեր համարվել:

Պատասխան

Ծառայությունների մատուցմանը վերաբերող հարկային հաշիվը չի կարող անվավեր ճանաչվել, եթե այդ ծառայություններն արդեն իսկ (փաստացի) մատուցվել են պայմանագրով սահմանված պայմաններով կամ ծառայության բովանդակությունն այնպիսին է, որ ծառայության արդյունքի հետ հանձնումն ուղղակի անհնարին է:

Հարց

Կազմակերպությունն իր կողմից հիմնադրված այլ առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալի ավելացման նպատակով անշարժ գույքի տեսքով ներդրում կատարելիս արդյո՞ք կրում է ավելացված արժեքի հարկի պարտավորություն:

Պատասխան

«Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ իր կողմից հիմնադրված առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալի ավելացման նպատակով անշարժ գույքի տեսքով ներդրում կատարելիս կազմակերպության համար առաջանում է ավելացված արժեքի հարկի հաշվարկման պարտավորություն:

Հարց

Ի՞նչ պարասխանավորություն է առաջանում հարկային մարմին ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկներով (յուրաքանչյուր ժամանակաշրջանի համար) պետական բյուջեից հաշվանցման ենթակա գումարն ավել ցույց տալու համար:

Պատասխան

«Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքի 43-րդ հոդվածի համաձայն՝ հարկ վճարողին առաջադրվում է ավել հաշվարկված՝ պետական բյուջեից հաշվանցման ենթակա գումարը, ինչպես նաև տուգանք, այդ գումարի 20 տոկոսի չափով, իսկ տուգանքը կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում նույն տեսակի խախտումը կրկին կատարելու դեպքում՝ տուգանք՝ այդ գումարի 40 տոկոսի չափով:

Հարց

Կազմակերպությունը 2015թ. հուլիսի 1-ից սկսել է բազմաբնակարան (բազմաֆունկցիոնալ) շենքի շինարարություն: Հաշվանցվո՞ւմ են, արդյոք, ընդհանուր օգտագործման տարածքների կառուցապատմանը վերագրվող ձեռքբերումների գծով ԱԱՀ-ի գումարները:

Պատասխան

«Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 30-րդ կետի համաձայն՝ մինչև 2021 թվականի հունվարի 1-ը ԱՀ տարածքում կառուցվող բազմաբնակարան (այդ թվում՝ բազմաֆունկցիոնալ) կամ ստորաբաժանված շենքի բնակարանների օտարումը կառուցապատողի կողմից ազատվում է ԱԱՀ-ից: Ըստ այդմ, ԱԱՀ-ից ազատված գործարքներին ուղղակիորեն վերագրվող ձեռքբերումների գծով ԱԱՀ-ի գումարներն այդ ձեռքբերումների կատարման հաշվետու ժամանակաշրջանում հաշվանցման ենթակա չեն: Հաշվանցման ենթակա չեն նաև հասարակական, արտադրական, առևտրային նշանակության տարածք չհամարվող այլ՝ ընդհանուր օգտագործման տարածքների կառուցապատմանը վերագրվող ձեռքբերումների գծով ԱԱՀ-ի գումարները:

Հարց

Փոխառության պայմանագրով նախատեսված տոկոսային եկամուտների մասով կազմակերպությունը կրո՞ւմ է, արդյոք, ավելացված արժեքի հարկի գծով հարկային պարտավորություն:

Պատասխան

«Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 17-րդ կետի

համաձայն՝ փոխառության տրամադրումը ազատված է ավելացված արժեքի հարկից:

Հարց

Մատակարարների կողմից դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները ենթակա՞ են, արդյոք, հաշվանցման, եթե ձեռք բերված ապրանքի կամ մատուցված ծառայության դիմաց գնորդ կազմակերպության կողմից վճարումը կատարվել է կանխիկ գումարը անմիջականորեն մատակարարի բանկային հաշիվ փոխանցելու միջոցով:

Պատասխան

«Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքի 23-րդ հոդվածի համաձայն՝ ձեռք բերված ապրանքների կամ ստացված ծառայությունների գծով մատակարարների կողմից դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարների չափով օրենքով սահմանված դեպքերում և կարգով հաշվանցում կատարվում է, եթե բանկի կամ փոստի միջոցով մատակարարի բանկային հաշվին կատարվել է վճարում: Ըստ այդմ, ձեռք բերված ապրանքի կամ ստացված ծառայության դիմաց կանխիկ գումարի վճարումն անմիջականորեն մատակարարի բանկային հաշվին համարվում է բանկային փոխանցում:

Հարց

Հասարակական նշանակության անշարժ գույքի նվիրատվության գործարքը ընդանիքի անդամների միջև ենթակա՞ է, արդյոք, ավելացված արժեքի հարկով հարկման:

Պատասխան

«Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ ֆիզիկական անձանց պատկանող՝ նվիրատվության ձևով գույքի օտարումը մերձավոր ազգակցական կապի (երեխա, ամուսին, ծնող, քույր, եղբայր, պապ, տատ, թոռ) մեջ գտնվող անձանց միջև ապրանքի մատակարարում չի համարվում:

Հարց

Ավելացված արժեքի հարկից ազատված գործարքների մասով հարկային հաշիվ դուրս գրելու դեպքում ավելացված արժեքի հարկի գծով ինչպիսի՞ հարկային պարտավորություն է առաջանում:

Պատասխան

«Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝ ավելացված արժեքի հարկից ազատված ապրանքների և ծառայությունների համար հարկային հաշիվներ դուրս չեն գրվում: Նույն օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝ խախտումով հարկային հաշիվներ դուրս գրելու դեպքում դրանք դուրս գրած անձինք պարտավոր են հարկային հաշվում առանձնացված ավելացված արժեքի հարկի գումարը սահմանված ընդհանուր կարգով վճարել բյուջե: Միաժամանակ, օրենքի 44.2-րդ հոդվածի համաձայն՝ ավելացված արժեքի հարկից ազատված գործարքների գծով մատակարարների կողմից դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ավելացված արժեքի հարկի գումարները ենթակա չեն հաշվանցման:

Հարց

ԼՂՀ-ում գյուղատնտեսական արտադրանք արտադրողից ձեռք բերված գյուղատնտեսական հումքի բազայի հիման վրա հացահատիկների (թեփահանած,

տափակեցրած, փաթիլների վերածած, ծեծած, մանրաձավարի տեսքով կամ մանրատրած) վերամշակումը ազատվում է, արդյոք, ավելացված արժեքի հարկից:

Պատասխան

ԼՂՀ կառավարության 16.05.2000թ. N 86 որոշման համաձայն՝ ավելացված արժեքի հարկից ազատվում են ԼՂՀ-ում գյուղատնտեսական արտադրանք արտադրողից ձեռք բերված գյուղատնտեսական հումքի բազայի հիման վրա ալյուրի, հացի, լավաշի և հացահատիկի թեփի վերամշակումը, իսկ հացահատիկների (թեփահանած, տափակեցրած, փաթիլների վերածած, ծեծած, մանրաձավարի տեսքով կամ մանրատրած) վերամշակումը 2016թ. հունվարի 1-ից հարկվում է ավելացված արժեքի հարկով: Միաժամանակ, ԼՂՀ կառավարության 12.02.2015թ. N 49-Ն որոշման համաձայն՝ հացահատիկների վերամշակման գործունեություն իրականացնող հարկ վճարողը կարող է որոշմամբ սահմանված կարգով դիմել ԼՂՀ գյուղատնտեսության նախարարություն՝ հաշվարկված և վճարված ԱԱՀ-ի գումարի չափով փոխհատուցում ստանալու նպատակով:

Հարց

ԱԱՀ վճարողի կողմից երաշխիքային ժամանակահատվածում սահմանված որակին չհամապատասխանող իրացված ապրանքի փոխարինման գործարքը ենթակա է արդյոք ԱԱՀ-ով հարկման:

Պատասխան

«ԱԱՀ-ի մասին» ԼՂՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ԱԱՀ-ով չեն հարկվում (հարկման օբյեկտ չեն համարվում) իրապարակային պայմանագրերով սահմանված երաշխիքային ժամանակահատվածում իրացված ապրանքների իրացնողի կողմից անհատույց մատուցվող սպասարկման ծառայությունները, այդ ծառայությունների շրջանակներում սահմանված որակին չհամապատասխանող ապրանքների, դրանց կոմպլեկտավորող տարրերի անհատույց փոխարինումը: Նույն օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝ օրենքով սահմանված կարգով մատակարարներին վճարված ԱԱՀ-ի գումարները ենթակա են հաշվանցման (չեն միացվում ապրանքների ձեռք բերելու գնին կամ արտադրության /շրջանառության/ ծախսերին):

Հարց

«Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի իմաստով ո՞րն է տրանսպորտային ծառայությունների մատուցման վայրը:

Պատասխան

Տրանսպորտային ծառայությունների մատուցման վայր է համարվում այն տեղը, որտեղից սկսվում է բեռների, փոստի, ուղևորների և ուղեբեռների փոխադրումը: ԼՂՀ տարածքում սկսվող բեռների, փոստի, ուղևորների և ուղեբեռների տրանսպորտային փոխադրումների մասով տրանսպորտային ծառայությունների մատուցման վայրը համարվում է ԼՂՀ (<<) տարածքից դուրս, եթե ծառայություն մատուցող անձի կողմից փոխադրման ծառայությունն ավարտվում է ԼՂՀ (<<) տարածքից դուրս:

Հարց

Ձեռք բերված ապրանքների կամ ստացված ծառայությունների գծով մատակարարի հանձնարարությամբ գնորդի կողմից այլ (երրորդ) անձանց բանկային փոխանցում կատարելու դեպքերում, մատակարարի հարկային հաշվում առանձնացված ԱԱՀ-ի գումարը ենթակա՞ է, արդյոք, հաշվանցման:

Պատասխան

«Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 23-րդ հոդվածի համաձայն՝ ձեռք բերված ապրանքների կամ ստացված ծառայությունների գծով մատակարարների կողմից դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարների չափով օրենքով սահմանված դեպքերում և կարգով հաշվանցում կատարվում է, եթե բանկի կամ փոստի միջոցով մատակարարի բանկային հաշվին կատարվել է վճարում: Ըստ այդմ, ձեռք բերված ապրանքների կամ ստացված ծառայությունների գծով մատակարարի հանձնարարությամբ գնորդի կողմից այլ (երրորդ) անձանց բանկային փոխանցում կատարելու դեպքերում, մատակարարի հարկային հաշվում առանձնացված ԱԱՀ-ի գումարը հաշվանցման ենթակա չէ:

Հարց

Հանձնարարության կամ պրինցիպալի անունից հանդես գալու պայման նախատեսող գործակալության պայմանագրերի դեպքերում ինչպե՞ս է որոշվում ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը:

Պատասխան

«Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ հանձնարարության կամ պրինցիպալի անունից հանդես գալու պայման նախատեսող գործակալության պայմանագրերի դեպքերում հանձնակատարի կամ գործակալի համար ԱԱՀ-ով հարկվող շրջանառություն կդիտվի նրանց հասանելիք գումարը (վարձատրության և հանձնակատարի կամ գործակալի կողմից իր անունով կատարած ծախսերի դիմաց որպես փոխհատուցում վճարվող գումարը՝ առանց ԱԱՀ-ի), իսկ հանձնարարողի կամ պրինցիպալի համար՝ մատակարարված ապրանքի կամ մատուցված ծառայության ընդհանուր արժեքը՝ առանց ԱԱՀ-ի:

Հարց

Սրացած հարկային հաշվի դիմաց վճարումը կատարվել է մաս-մաս: Ե՞րբ պետք է կատարվի հաշվանցումը:

Պատասխան

«Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 23-րդ հոդվածի համաձայն՝ արտադրական և այլ առևտրային նպատակներով հանրապետության տարածքում ձեռք բերված ապրանքների և ստացված ծառայությունների դիմաց բանկի կամ փոստի միջոցով մատակարարի բանկային հաշվին փոխանցումները մասնակիորեն կատարվելու դեպքում ԱԱՀ-ի հաշվանցումները կատարվում են վճարմանը համամասնորեն:

Հարց

Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից անշարժ գույքի վարձակալության գործարքները համարվում են, արդյո՞ք, ԱԱՀ-ով հարկվող գործարքներ:

Պատասխան

«Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ և 6-րդ հոդվածի 2-րդ կետերի համաձայն՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից անշարժ գույքի վարձակալության գործարքներից հասույթի գումարը

ընթացիկ տարում 12.0 մլն դրամը գերազանցելու դեպքում (ԱԱՀ-ի շեմ) վերջիններս գերազանցող գումարի մասով կրում են ԱԱՀ-ի վճարման պարտավորություն:

Հարց

Ինչպե՞ս է որոշվում շենքերի, շինությունների օդարման դեպքում ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը:

Պատասխան

«Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 8-րդ հոդվածի 10-րդ կետի համաձայն՝ շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց), բնակելի կամ այլ տարածքների օդարման դեպքում ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը որոշվում է «Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 8-րդ հոդվածով սահմանված կարգով, բայց ոչ պակաս գույքահարկով հարկման նպատակով՝ դրանց համար օրենքով սահմանված կարգով որոշվող արժեքից (կադաստրային արժեքից):

Հարց

Անշարժ գույքի հետ կապված ծառայությունների համար ո՞րն է ծառայությունների մատուցման վայրը:

Պատասխան

«Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝ անշարժ գույքի հետ կապված ծառայությունների համար, այդ թվում՝ վարձակալության, առք ու վաճառքի գործակալների ու փորձագետների ծառայությունների, շինարարության նախապատրաստման և իրականացման ծառայությունների (ներառյալ՝ նախագծման, հետախուզման, վերահսկողության և այլ հարակից ծառայությունները) մատուցման վայր է համարվում այն վայրը, որտեղ գտնվում է անշարժ գույքը կամ նախատեսվում է դրա կառուցումը:

Հարց

ԱԱՀ վճարող անձանց կողմից արտադրական և այլ առևտրային նպատակներով ձեռք բերված ապրանքների կորստի դեպքում մատակարարներին վճարված ԱԱՀ-ի գումարները ենթակա՞ են, արդյոք, հաշվանցման (վերադարձման):

Պատասխան

«Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 23-րդ հոդվածի համաձայն՝ ԱԱՀ վճարող անձանց կողմից արտադրական և այլ առևտրային նպատակներով ձեռք բերված ապրանքների կորստի դեպքում մատակարարներին (օրենքով սահմանված դեպքում՝ մաքսային սահմանին) վճարված (հարկային հաշիվներում կամ մաքսային փաստաթղթերում առանձնացված) ԱԱՀ-ի գումարները ենթակա են հաշվանցման կամ վերադարձման, եթե այդ կորուստները շահութահարկով հարկման նպատակով դիտվում են որպես համախառն եկամտից նվազեցում, հակառակ դեպքում՝ այդ գումարները ենթակա են վերաձևակերպման (հաշվանցված գումարներից պակասեցման):

Հարց

Մեկ օրացուցային տարվա ընթացքում երկու և ավելի թվով անգամ անհադ ձեռնարկադեր չհանդիսացող ֆիզիկական անձի սեփականությունը կամ ընդհանուր սեփականությունը հանդիսացող նույն տեսակի գույքի՝ բնակարանի, առանձնատան (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), անձնական օգտագործման

ավորոմքենայի, գյուղադնարեսական նշանակության և բնակավայրերի հողերի, ավորոմակի՝ որևէ ձևով կարարվող հարուցման դիմաց օտարումը ո՞ր դեպքում է համարվում ապրանքի մարակարարում:

Պատասխան

Համաձայն «Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 3-րդ և 6-րդ հոդվածների՝ նշված գործարքը կդիտվի ապրանքի մատակարարում, եթե երկրորդ և ավելի թվով անգամ օտարվող գույքը ձեռք է բերվել օտարման պահին նախորդող մեկ տարին չգերազանցող ժամանակահատվածում: Ընդ որում՝ տվյալ դեպքում ԱԱՀ-ի շեմ չի կիրառվում:

Հարց

Որևէ հաշվետու ժամանակաշրջանի համար դուրս գրված և մարակարարներից ստացված հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկանքում հարկային հաշիվների վերաբերյալ չներառված տեղեկությունները հեղադառնում հարկ վճարողը ինչպե՞ս պետք է ներառի տեղեկանքում:

Պատասխան

Տեղեկանքում դուրս գրված կամ մատակարարներից ստացված առանձին հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկություններ չներառելու կամ դրանք սխալներով ներկայացնելու փաստը ինքնուրույն հայտնաբերելու դեպքերում հարկ վճարողը այդ հաշիվների դուրսգրման կամ ստացման հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացնում է ճշտված տեղեկանք:

Հարց

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալում ֆիզիկական անձին պատկանող բաժնեմասի օտարման դեպքում առաջանում է, արդյոք, որևէ հարկային պարտավորություն:

Պատասխան

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալում ֆիզիկական անձին պատկանող բաժնեմասի նկատմամբ սեփականության իրավունքի այլ անձի փոխանցման գործարքի մասով տվյալ ֆիզիկական անձը որևէ հարկային պարտավորություն չի կրում: Մասնավորապես,

«Եկամտային հարկի մասին» ԼՂՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ բաժնետոմսերի կամ ներդրում վկայող այլ արժեթղթերի օտարումից ֆիզիկական անձանց ստացված եկամուտը եկամտային հարկով հարկման առումով դիտվում է որպես նվազեցում (եկամտային հարկով հարկման ենթակա չէ):

«Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալում անձին պատկանող բաժնեմասի նկատմամբ սեփականության իրավունքի այլ անձի փոխանցումը ԱԱՀ-ով հարկման օբյեկտ չի համարվում:

Հարց

Ո՞ր գործարքների մասով է ԱԱՀ-ի վճարման պահը որոշվում դրանց դիմաց փաստացի վճարումների պահով:

Պատասխան

«Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 24.3-րդ հոդվածի համաձայն՝ «Գնումների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքին

համապատասխան պետական գնումների շրջանակներում ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման գործարքների մասով ԱԱՀ-ի վճարման պարտավորության ծագման պահը որոշվում է ձեռք բերված ու մատակարարված ապրանքների և մատուցված ու ստացված ծառայությունների դիմաց վճարման պահով: Տվյալ դրույթի կիրառման նպատակով պետական գնումների շրջանակներում ապրանքներ մատակարարող և ծառայություններ մատուցող իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը հաշվառման վայրի հարկային մարմին պետք է ներկայացնեն պետական պատվեր տեղադրող մարմնի կողմից տրամադրած՝ պետական գնումների շրջանակներում մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների համար փաստացի վճարելու պահի վերաբերյալ տեղեկանք:

Հարց

Ավելացված արժեքի հարկով հարկման ենթակա՞ են, արդյոք, ստացված սուբսիդիաների, սուբվենցիաների և դրամաշնորհների գումարները:

Պատասխան

Ավելացված արժեքի հարկով չեն հարկվում (հարկման օբյեկտ չեն համարվում) սուբսիդիաների, սուբվենցիաների, դրամաշնորհների կամ այլ ձևով այնպիսի գումարների ստացումը, որոնց դիմաց գումարներ ստացողների մոտ, ըստ էության, ապրանքներ մատակարարելու (ծառայություններ մատուցելու) պարտավորություն չի առաջանում: Այդ գումարները ապրանքների մատակարարման (ծառայությունների մատուցման) դիմաց տրամադրվելու դեպքում ենթակա են ավելացված արժեքի հարկով հարկման օրենքով սահմանված ընդհանուր կարգով:

Հարց

Կոմիսիայի կամ գործակալի անունից հանդես գալու պայման նախատեսող գործակալության պայմանագրերի դեպքերում ո՞րն է համարվում հարկվող շրջանառություն գործակալի համար:

Պատասխան

«Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ կոմիսիայի կամ գործակալի անունից հանդես գալու պայման նախատեսող գործակալության պայմանագրերի դեպքում կոմիսիոնների կամ գործակալի մոտ ավելացված արժեքի հարկով հարկվող շրջանառություն է համարվում կոմիսիայի կամ գործակալության պայմանագրի հիման վրա մատակարարված ապրանքի կամ մատուցված ծառայության ընդհանուր արժեքը (առանց ավելացված արժեքի հարկի):

Հարց

Ավելացված արժեքի հարկով հարկման ենթակա՞ է, արդյոք, կազմակերպության լուծարման դեպքում գույքը սեփականության իրավունքով հիմնադրին անցնելու գործարքը:

Պատասխան

«Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 40-րդ հոդվածի համաձայն՝ առևտրային կազմակերպությունների, ինչպես նաև ոչ առևտրային կոոպերատիվների լուծարման ընթացքում դրանց կողմից սեփականության իրավունքի օբյեկտների և այլ գույքային իրավունքների օտարումը, այդ թվում՝ պետության և երրորդ անձանց հանդեպ պարտավորությունները կատարելուց (մարելուց) հետո բաժնետերերի, հիմնադիրների, փայամասնակիցների միջև բաշխումը (օտարումը) ենթակա է

ավելացված արժեքի հարկով հարկման՝ սահմանված ընդհանուր կարգով, բացառությամբ կանոնադրական կամ բաժնետիրական կապիտալում ներդրում կատարած ֆիզիկական անձ հանդիսացող բաժնետերերի, հիմնադիրների, փայմասանակիցների կողմից ներդրված համապատասխան գույքի հետ ստացումը՝ ներդրման պահին որոշված արժեքը չգերազանցող չափով:

Հարց

Ապրանքների անհատույց մատակարարման կամ իրական արժեքից 20 տոկոսից ավելի ցածր գներ (մասնակի հատուցում) կիրառելու դեպքում, ինչպե՞ս է որոշվում ավելացված արժեքի հարկով հարկման օբյեկտը:

Պատասխան

«Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ ապրանքների անհատույց մատակարարման (ծառայությունների անհատույց մատուցման) կամ այն դեպքում, երբ դրանց դիմաց տվյալ գործարքների (գործառնությունների) համար սովորականի համեմատ կիրառվում են գործարքի իրական արժեքից 20 տոկոսից ավելի ցածր գներ (մասնակի հատուցում), որպես ավելացված արժեքի հարկով հարկման օբյեկտ է համարվում այդպիսի (նույնանման) գործարքների համար համեմատելի հանգամանքներում որպես հարկվող շրջանառություն ընդունվող՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքին համապատասխան որոշվող մեծության (գործարքի արժեքի, վճարի, վարձատրության, պարգևի կամ այլ դրամական հատուցման մեծության), իսկ դրա բացակայության դեպքում՝ համանման պայմաններում գործող այլ հարկ վճարողի կողմից համեմատելի հանգամանքներում նույնանման գործարքների համար սովորաբար որպես հարկման օբյեկտ ընդունվող մեծության (գործարքի իրական արժեքի) 80 տոկոսը կազմող մեծությունը:

Առևտրային գեղչերի կիրառման դեպքում «իրական արժեքը»՝ հարկ վճարողի կողմից հայտարարված վաճառքի գինն է, որի նկատմամբ կիրառվել է գեղչը: Արդյունքում վաճառքի գնից 20 տոկոսից ավելի գեղչի դեպքում ավելացված արժեքի հարկով հարկվող շրջանառությունը ընդունվում է «իրական արժեքի» 80 տոկոսը կազմող մեծությունը:

Վաճառքի ցածր գների կիրառման դեպքում «իրական արժեքը»՝ այդպիսի (նույնանման) գործարքների համար համեմատելի հանգամանքներում որպես հարկվող շրջանառություն ընդունվող մեծության, իսկ դրա բացակայության դեպքում՝ համանման պայմաններում գործող այլ հարկ վճարողի կողմից համեմատելի հանգամանքներում նույնանման գործարքների համար սովորաբար որպես հարկման օբյեկտ ընդունվող մեծության 80 տոկոսը կազմող մեծությունն է:

Հարց

Դեղատնային բժշկական պարագաների իրացումն ազատվում է, արդյոք, ավելացված արժեքի հարկից:

Պատասխան

«Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 15-րդ հոդվածի 19-րդ կետի և ԼՂՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության 19.04.2004թ. N 17/Ղ հրամանի համաձայն՝ այն պարագաների իրացումը, որոնք կարող են օգտագործվել նաև ոչ բժշկական նպատակներով, ազատվում են ավելացված արժեքի հարկից, եթե այդ պարագաները իրացվում են բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ մատուցող անձանց:

Հարց

Կազմակերպությունը հանձնարարության պայմանագրի հիման վրա ձեռք է բերում գյուղատնտեսական մշակաբույսեր և հանձնում պրինցիպալին (հանձնարարողին): Տվյալ պարագայում հանձնակատարի ստացված միջնորդավճարը հարկվում է, արդյոք, ավելացված արժեքի հարկով:

Պատասխան

Հանձնարարության պայմանագրով իրականացվող ծառայությունների նկատմամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետով սահմանված ավելացված արժեքի հարկից ազատման արտոնությունները չեն կիրառվում (արտոնությունը կիրառում են այն անձինք, որոնց մոտ ձևակերպվում է այդ ապրանքների իրացման շրջանառությունը):

Հարց

Ոչ իրացման նպատակով ձեռք բերված (ներմուծված) բեռնաուղևորատար մեքենաների դիմաց մատակարարներից ստացված հարկային հաշիվներում (ապրանքների ներմուծման մաքսային հայտարարագրերում) առանձնացված ավելացված արժեքի հարկի գումարները ենթակա՞ են հաշվանցման:

Պատասխան

Ոչ իրացման նպատակով բեռնաուղևորատար մեքենաներ ձեռք բերելու դեպքում մատակարարների հարկային հաշիվներում (ապրանքների ներմուծման մաքսային հայտարարագրերում) առանձնացված ավելացված արժեքի հարկի գումարները ենթակա են հաշվանցման՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 20-րդ, 23-րդ, 26-րդ և 27-րդ հոդվածներով սահմանված պայմանները բավարարելու դեպքում:

Հարց

Հարկ վճարողը ո՞ր դեպքերում է ներկայացնում ամսական ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ-ի) հաշվարկ:

Պատասխան

«Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 32-րդ հոդվածի համաձայն՝ այն անձանց համար, որոնց ապրանքների մատակարարումից, ծառայությունների մատուցումից, այդ թվում՝ անհատույց կամ մասնակի հատուցմամբ, հասույթը նախորդող օրացուցային տարում գերազանցել է 60 մլն դրամը, ավելացված արժեքի հարկի վճարման հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր ամիսը: Ընդ որում, 60 մլն դրամ շեմը որոշելիս հաշվի է առնվում թվարկված բոլոր գործարքների ընդհանուր հասույթը, մասնավորապես, հարկի 20 տոկոս, 0 տոկոս դրույքաչափով հարկվող, ավելացված արժեքի հարկից ազատված, առևտրի հարկով կամ հաստատագրված վճարներով հարկվող գործարքներից ստացված հասույթը: Նշված հասույթի մեջ չեն ներառվում անուղղակի հարկերը:

Հարց

Եթե հաշվետու ամսում առևտրային կազմակերպությունը իրացման շրջանառություն չի ունեցել, սակայն հաշվետու ամսում ստացել է հարկային հաշիվներ, որոնց գումարների մեջ ներառված է ավելացված արժեքի հարկի գումարը և նույն ամսում բանկային փոխանցմամբ մատակարարին կատարել է վճարում, արդյո՞ք, կազմակերպությունը կարող է հաշվանցել ավելացված արժեքի հարկի այդ գումարները հաշվետու ամսում:

Պատասխան

«Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 3-րդ և 23-րդ հոդվածների համաձայն՝ ավելացված արժեքի հարկի հաշվանցում կարող են կատարել ավելացված արժեքի հարկ վճարող՝ օրենքի 6-րդ հոդվածում նշված՝ ավելացված արժեքի հարկով հարկվող գործարքներ իրականացրած անձինք: Ըստ այդմ, ընկերությունը հաշվանցման իրավունք է ձեռք բերում այն հաշվետու ժամանակաշրջանից սկսած, որում իրականացրել է ավելացված արժեքի հարկով հարկվող գործարք, այսինքն համարվել է ավելացված արժեքի հարկ վճարող: Հետագա հաշվետու ժամանակահատվածներում իրացման շրջանառություն չունենալու դեպքում, եթե բավարարված և պահպանված են օրենքի 20-րդ, 23-րդ, 26-րդ և 27-րդ հոդվածների պահանջները, ընկերությունը կարող է դրանց մասով կատարել հաշվանցումներ:

Հարց

Հաշվետու ժամանակաշրջանում հաշվանցման ենթակա ավելացված արժեքի հարկի գումարները հարկվող շրջանառության նկատմամբ հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարներին գերազանցելու դեպքում գերազանցող մասը ե՞րբ է հաշվանցվում:

Պատասխան

Համաձայն «Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 25-րդ հոդվածի՝ հաշվետու ժամանակաշրջանում հաշվանցման ենթակա ավելացված արժեքի հարկի գումարները հարկվող շրջանառության նկատմամբ հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարները գերազանցելու դեպքում գերազանցող մասը, բացառությամբ ավելացված արժեքի հարկի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների գծով սահմանված կարգով որոշվող գումարների, հաշվանցվում է հետագա ժամանակաշրջաններում ավելացված արժեքի հարկի հաշվարկներով բյուջե վճարման ենթակա ավելացված արժեքի հարկի գումարների հաշվին:

Հարց

Պահպարվության պայմանագրով պահառուի մոտ ո՞րն է ավելացված արժեքի հարկի գծով հարկային պարտավորության առաջացման պահը:

Պատասխան

Ի պահ վերցված գույքի հետ վերադարձման պահին, ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի համաձայն, պահատուի հանդեպ պահառուի պարտավորությունը կատարված է: Ըստ այդմ՝ պահառուի մոտ ավելացված արժեքի հարկի գծով հարկային պարտավորության առաջացման պահ պետք է համարվի այդ գույքի հետ վերադարձման պահը:

Հարց

Համաձայն վարձատրուի և վարձակալի միջև կնքված վարձակալական պայմանագրի՝ վարձակալի կողմից վարձակալական վճարը ենթակա է վճարման յուրաքանչյուր վեց ամիսը մեկ անգամ: Տվյալ պարագայում վարձատրուի մոտ ե՞րբ է առաջանալու ավելացված արժեքի հարկի հաշվարկման պարտավորությունը:

Պատասխան

«Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 31-րդ հոդվածի համաձայն՝ ավելացված արժեքի հարկ վճարողների կողմից հարկվող գործարքների (գործառնությունների) իրականացման դեպքում ծառայությունների մատուցման, ինչպես նաև դրա հետ կապված հարկային պարտավորության (ավելացված արժեքի

հարկի հաշվարկման) ծագման պահ է համարվում այն պահը, երբ ծառայությունները մատուցվել են պատվիրատուներին:

Վարձակալության պայմանագրի պարագայում հարկման առումով ծառայությունը մատուցված համարելու պահ է համարվում այն պահը, որը գործարար շրջանակներում ընդունված սովորույթներին համապատասխան, համարվում է ծառայությունը մատուցված համարելու պահ: Մասնավորապես, Քաղաքացիական օրենսգրքի 7-րդ հոդվածի համաձայն, գործարար շրջանառության սովորույթ է համարվում ձեռնարկատիրական գործունեության որևէ բնագավառում ձևավորված և լայնորեն կիրառվող օրենսդրությամբ չնախատեսված վարքագծի կանոնը, անկախ դրա՝ որևէ փաստաթղթում ամրագրման հանգամանքից:

Հարց

Ավելացված արժեքի հարկի գծով սխալներն ինքնուրույն հայտնաբերելիս ո՞ր դեպքերում կարող է սահմանափակվել հարկ վճարողի կողմից ճշտված հաշվարկների ներկայացման հնարավորությունը:

Պատասխան

«Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 33-րդ հոդվածի համաձայն՝ ավելացված արժեքի հարկի գծով սխալների ինքնուրույն հայտնաբերման դեպքում դրանց ճշգրտման արդյունքներով չեն կարող ներկայացվել ճշտված հաշվարկներ, եթե դրանք վերաբերում են հարկային մարմինների կողմից ստուգվող կամ արդեն իսկ ստուգված ժամանակաշրջաններին, ինչպես նաև ավելացված արժեքի հարկ վճարող չհանդիսացող անձանց կողմից դուրս գրված հարկային հաշիվներին, այն ապրանքներին և ծառայություններին, որոնք ազատված են ավելացված արժեքի հարկից և հարկման օբյեկտ չհանդիսացող կամ զրոյական դրույքաչափով հարկվող գործարքներին: Միաժամանակ, «Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի 31-րդ հոդվածի համաձայն, ճշտված հարշվարկներ չեն կարող ներկայացվել, եթե այդ գումարները վերաբերում են այն հաշվետու ժամանակաշրջանին, որից անցել է երեք տարի:

Հարց

Ավելացված արժեքի հարկով հարկման ենթակա՞ են, արդյոք, ոռոգման ջրի մատակարարման գործարքները:

Պատասխան

«Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 15-րդ հոդվածի 33-րդ կետի համաձայն՝ ջրօգտագործողների ընկերությունների կողմից ոռոգման ջրի մատակարարման գործարքները մինչև 2018 թվականի հունվարի 1-ը ազատվում են ավելացված արժեքի հարկից:

Հարց

«Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 15-րդ հոդվածի 27-րդ կետի համաձայն՝ ո՞ր թանկարժեք մեքաղներից պատրաստված ոսկերչական նշանակության կիսաֆաբրիկատների իրացումն է ազատվում ավելացված արժեքի հարկից:

Պատասխան

Թանկարժեք մետաղներից պատրաստված ոսկերչական նշանակության կիսաֆաբրիկատներն են՝

Արծաթը (ներառյալ՝ արծաթ՝ ոսկու և պլատինի գալվանական պատվածքով) չմշակված, կիսամշակված կամ փոշու տեսքով (ԱՏԳԱԱ 7106), ոսկին (ներառյալ՝

ալատինի գալվանական պատվածքով) չմշակված, կիսամշակված կամ փոշու տեսքով (ԱՏԳԱԱ 7108), ոչ թանկածեք մետաղները կամ արծաթը, երեսապատված (դրվագված) ոսկով, չմշակված կամ կիսամշակված (ԱՏԳԱԱ 7109), չմշակված կամ կիսամշակված կամ փոշու տեսքով ալատին (ԱՏԳԱԱ 7110), ոսկերչական իրերը և դրանց մասերը՝ թանկարժեք մետաղներից կամ մետաղներից երեսապատված (դրվագված) ոսկով (ԱՏԳԱԱ 7113), այլ ապրանքները թանկարժեք մետաղներից կամ մետաղներից երեսապատված (դրվագված) ոսկով (ԱՏԳԱԱ 7115):

Հարց

Ի՞նչ կարգ է նախատեսված մարդատար ավտոմեքենաների ձեռքբերման ժամանակ վճարված ավելացված արժեքի հարկի գումարների հաշվանցման համար:

Պատասխան

«Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ մարդատար ավտոմեքենաների ձեռքբերման համար սահմանված է առանձնահատուկ կարգ: Որոշ դեպքերում մարդատար ավտոմեքենաների ձեռքբերման ժամանակ վճարված ավելացված արժեքի հարկի գումարներն ընդհանրապես ենթակա չեն հաշվանցման: Ուստի օրենքի տվյալ նորմի ճիշտ կիրառման առումով անհրաժեշտ է նկատի ունենալ, որ եթե ավելացված արժեքի հարկ վճարող համարվող անձը ոչ իրացման նպատակով (օրինակ՝ կազմակերպության կարիքների համար) ներմուծել կամ ձեռք է բերել մարդատար ավտոմեքենա, որի համար սահմանված կարգով վճարել է ավելացված արժեքի հարկ, ապա տվյալ դեպքում ավտոմեքենայի համար վճարված ավելացված արժեքի հարկի գումարը ենթակա չէ հաշվանցման և պետք է ավելացվի ավտոմեքենայի ձեռքբերման արժեքին:

Հետագայում այդ ավտոմեքենան իրացնելիս հարկ վճարողի մոտ առաջանում է ավելացված արժեքի հարկի հարկային պարտավորություն, որից կարելի է հաշվանցել իրացման պահին ավտոմեքենայի մնացորդային արժեքի նկատմամբ հաշվարկային եղանակով հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարը:

Օրինակ.

2015 թվականի փետրվարի 5-ին կազմակերպությունը ոչ իրացման նպատակով ձեռք է բերել «ՎԱԶ-2121» մակնիշի երկու համանման ավտոմեքենա, ընդհանուր գումարով 6325.0 հազ. դրամ, այդ թվում՝ ավելացված արժեքի հարկ՝ 1054.4 հազ. դրամ, որոնք շահագործման են հանձնվել մարտի 1-ին: Հետագայում մեքենաներից մեկը 2015թ. սեպտեմբերի 1-ին իրացվել է այդ կազմակերպության կողմից՝ 3000.0 հազ. դրամով, այդ թվում՝ ավելացված արժեքի հարկի գումար 500.0 հազ. դրամ:

Պարզաբանում. Բերված օրինակում հարկ վճարողը ոչ իրացման նպատակով ձեռք բերված մեքենաների դիմաց վճարած ավելացված արժեքի հարկի գումարը (1054.4 հազ. դրամ) պարտավոր է միացնել մեքենայի ձեռքբերման արժեքին:

2015 թ. սեպտեմբերին մեքենաներից մեկի իրացման ժամանակ առաջանում է ավելացված արժեքի հարկի պարտավորություն՝ 500.0 հազ. դրամի չափով: Այդ նույն ժամանակ թույլատրվում է կատարել նաև մեքենայի ձեռքբերման ժամանակ վճարված ավելացված արժեքի հարկի գումարի մի մասի հաշվանցում, որը որոշվում է հետևյալ կերպ.

2015 թվականի փետրվարին մեկ մեքենայի արժեքը՝ ավելացված արժեքի հարկի հետ միասին, ձեռքբերման պահին կազմել է 3162.5 հազ. դրամ (6325.0:2): Հիմք ընդունելով մեքենաների համար պայմանականորեն ընտրված ամորտիզացիոն ժամկետը 5 տարի՝ մեկ մեքենայի ամորտիզացիոն տարեկան մեծությունը կկազմի

632.5 հազ. դրամ (3162.5:5), իսկ 2015 թվականի 6 ամսվա համար՝ 316.25 հազ. դրամ (2015 թվականի մարտ-օգոստոս): Իրացման պահին իրացվող մեքենայի մնացորդային արժեքը կկազմի 2846.25 հազ. դրամ (3162.5-316.25): Իրացման պահին մեքենայի մնացորդային արժեքից 16.67 տոկոս հաշվարկային դրույքաչափով հաշվարկվում է ավելացված արժեքի հարկի գումարը՝ 474.47 հազ. դրամ ($2846.25 \times 16.67\%$), որը ենթակա է հաշվանցման:

Այսինքն, տվյալ դեպքում մեքենայի իրացումից բյուջե վճարման ենթակա գումարը կկազմի 25.53 հազ. դրամ (500.0-474.47):

Վերը նշված օրինակի դեպքում, եթե մեքենան իրացվեր, օրինակ՝ ձեռքբերման պահից 6 տարի հետո, ապա մեքենայի իրացումից ավելացված արժեքի հարկը կհաշվարկվեր օրենքով սահմանված ընդհանուր կարգով: Տվյալ դեպքում, մեքենայի ձեռքբերման ժամանակ վճարված ավելացված արժեքի հարկի գումարից հաշվանցման ենթակա ավելացված արժեքի հարկի գումար չի առաջանա, քանի որ մեքենան մնացորդային արժեք չի ունենա (մեքենայի արժեքը ամբողջությամբ կամորոտիզացվի (կլրանա ամորտիզացիոն ժամկետը)):

Հարց

Ուսումնական հաստատությունները քաղծառայության համակարգի աշխատողների որակավորման և վերաորակավորման դասընթացներ կազմակերպելու դեպքում ազատվում են ավելացված արժեքի հարկից:

Պատասխան

«Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ կետի և ԼՂՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության 03.05.04թ. թիվ 22/Ղ հրամանի համաձայն՝ որակավորման և վերաորակավորման ուսումնական հաստատությունների ուսման վարձի ավելացված արժեքի հարկից ազատման արտոնությունը տարածվում է այն ուսումնական հաստատությունների վրա, որոնք իրականացնում են գիտական և մշակույթի մի շարք ուղղությունների գծով մասնագիտական հետբուհական կրթական ծրագրեր, մասնավորապես «Կրթության մասին» ԼՂՀ օրենքի 25-րդ հոդվածի համաձայն՝ հետբուհական և մասնագիտական կրթությունն իրականացվում է բարձրագույն ուսումնական հաստատությունների և գիտական հիմնարկների ասպիրանտուրայում, ինտերնատուրայում, օրդինատուրայում հետազոտողի կլինիկական օրդինատորի կրթական ծրագրերով, ինչպես նաև ուսումնական կենտրոններում մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի կրթական ծրագրերով: Քանի որ քաղաքացիական ծառայողների որակավորման և վերաորակավորման դասընթացները չեն բավարարում վերոնշյալ նորմատիվ ակտերի պահանջներին, հետևաբար ուսման վճարներից ստացված հասույթը ենթակա է հարկման՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքով սահմանված ընդհանուր կարգով: